ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գր. 17.04.2014թ
Կոդ. 11714172

«24» Դեկտեմբեր 2014թ

ՀՐԱՄԱՆ
№ 87-Ն

ՀՀՇՆ 20-06-2014 <ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ. ՀԻՄԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ> ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<Քաղաքաշինության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 10[1]-րդ, 16-րդ հոդվածների, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի թիվ 156-Ն որոշման համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել <ՀՀՀՇՆ 20-06-2014 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ> շինարարական նորմերը>՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի <Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին> N 82 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) ուժը կորցրած ճանաչել հրամանով սահմանված ցանկի ՀՀՇՆ I–4.02-99 <Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ> պարբերությունը:

Նախարար՝ Ս. Թադևոսյան